

**ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Սույն կատարողականի գնահատումն իրականացվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշմանը համապատասխան, բազմակողմանիության, ամբողջականության և անկողմնակալության սկզբունքներով, կատարողականի գնահատման չափորոշիչների վերլուծության և գնահատման միջոցով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանության հիման վրա:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

- 1) նպատակի չափորոշիչներ,
- 2) գործընթացի չափորոշիչներ,
- 3) արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Նպատակի չափորոշիչները վերաբերում են շուկայում ոչ պարենային արտադրանքի անվտանգության ապահովմանը և օրենսդրության հետ համապատասխանությանը:

Նպատակի չափորոշիչներն են՝

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը:

Գնահատման համար վերլուծել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները:

Չափորոշիչի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Բացասական,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ նպատակին հասնելու մակարդակը գնահատվում է բացասական, եթե՝

1. հաշվետու ժամանակահատվածում, Տեսչական մարմնի իրականացված ստուգումները Տեսչական մարմնին վերապահված ոլորտների 30%-ը չեն գերազանցել,
2. հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների 70%-ից ավելի տնտեսվարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են խախտումներ,
3. հաշվետու ժամանակահատվածում ստուգումների արդյունքում արձանագրվել են 2-ից ավելի շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վտանգի կամ ռիսկի դեպքեր:

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքների ուսումնասիրությամբ պարզվել է՝ 2018 թվականի 3-րդ եռամսյակում իրականացված ստուգումները կազմել են Տեսչական մարմնին վերապահված ոլորտների 86,6%-ը

(Տեսչական մարմնին վերապահված 30 ոլորտներից 26-ում իրականացվել են ստուգումներ), կատարված ստուգումների 81%-ից ավելի տնտեսվարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են խախտումներ (իրականացված 76 ստուգումներից 62-ում արձանագրվել են խախտումներ) և ստուգումների արդյունքում չեն արձանագրվել շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վտանգի կամ ռիսկի դեպքեր:

Վերլուծություն: Չափորոշիչը գնահատվել է բացասական 2-րդ կետի արդյունքների հիման վրա՝ հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների 70%-ից ավելի տնտեսվարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են խախտումներ:

Նշված կետը ցույց է տալիս Տեսչական մարմնի հիմնական նպատակին հասնելու մակարդակը: ՀՀ վարչապետի 2018 հունիսի 11-ի թվականի N 732-Լ որոշմամբ հաստատված ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կանոնադրությամբ Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ոչ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Հաշվի առնելով հայտնաբերված խախտումների բարձր տոկոսը (87%)՝ նպատակին հասնելու մակարդակը չի կարելի համարել բավարար:

1.2) Ոչ պարենային արտադրանքի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը:

Գնահատման համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքները, ինչը համեմատվել է նախորդ հաշվետու ժամանակահատվածի արդյունքների հետ:

Չափորոշչի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Չեզոք,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է չեզոք, եթե, հաշվետու ժամանակահատվածում, համեմատած նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ, իրավիճակի գնահատականի ցուցանիշը ունեցել է տատանում ոչ ավելի քան 5%:

2018 թվականի 3-րդ եռամսյակի ցուցանիշը կազմել է 62,8 միավոր, իսկ նախորդ հաշվետու ժամանակահատվածի ցուցանիշը կազմել է 65,7 միավոր: Ցուցանիշը նվազել է 2,9 %-ով:

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

Գնահատման համար համեմատվել են հաշվետու ժամանակահատվածի և նախորդ տարվա նույն եռամսյակի արդյունքները:

Չափորոշչի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Բացասական,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է բացասական, եթե հաշվետու ժամանակահատվածում, ֆինանսական միջոցներից կամ մարդկային ռեսուրսներից որևէ մեկի ծախսը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5%-ից ավել:

2018 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն ծախսվել, իսկ մարդկային ռեսուրսները կազմել են 3 աշխատակից: 2017 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ծախսվել են ֆինանսական միջոցներ - 56 800 դրամ և մարդկային ռեսուրսներ - 4 աշխատակից: Այդպիսով ֆինանսական և մարդկային ռեսուրսների ծախսը նվազել է 5%-ից ավել:

Վերլուծություն: 2017 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմինը ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար իրականացրել է շուկայում ոլորտային ուսումնասիրություն-դիտարկումներ, որոնց մասնակցել են Տեսչական մարմնի 4 աշխատակից և հատկացվել է 56 000 դրամ: 2018 թվականին նման աշխատանք Տեսչական մարմնի կողմից չի իրականացվել:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

Գնահատման համար համեմատվել են հաշվետու ժամանակահատվածի և նախորդ տարվա նույն եռամսյակի արդյունքները:

Չափորոշչի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- Բացասական,

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է բացասական, եթե հաշվետու ժամանակահատվածում, ֆինանսական միջոցներից կամ մարդկային ռեսուրսներից որևէ մեկի ծախսը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատած 5%-ից ավել:

2018 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ֆինանսական միջոցների ծախսը կազմել է 15 600 դրամ, մարդկային ռեսուրսները կազմել են 9 աշխատակից իսկ 2017 թվականի 3-րդ եռամսյակում չափորոշչի իրականացման նպատակով ծախսվել է 213 000 դրամ և մարդկային ռեսուրսներ - 11 աշխատակից: Այդպիսով ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների ծախսը նվազել է 5%-ից ավել:

Վերլուծություն: 2017 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից իրականացվել են իրազեկման աշխատանքներ Հայաստանի տարբեր մարզերում, որոնց կատարման համար անհրաժեշտ են եղել աշխատակիցների գործուղումներ: 2018 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի իրազեկման աշխատանքները հիմնականում իրականացվել են Երևան քաղաքում, որոնց անցկացնելու համար հավելյալ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտություն չի եղել:

Առաջարկություն: Չափորոշչի կատարման նպատակով Տեսչական մարմինը անցկացնում է միայն ոլորտային իրազեկում-հանդիպումներ: Չափորոշիչով գնահատվող գործառույթի լիարժեք կատարման նպատակով առաջարկում ենք իրազեկում-հանդիպումների հետ մեկտեղ տարածել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ օգտագործելով նաև ԶԼՄ-ները, տեղեկագրերը և այլ միջոցները:

1.5) **Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակը:**

Գնահատումը իրականացվում է տարին մեկ անգամ՝ 4-րդ եռամսյակում:

2. ԳՈՐԾՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

Գործընթացի չափորոշիչներն են՝

2.1) **Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.**

Գնահատման նպատակով վերլուծվում և համադրվում են հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, Տեսչական մարմնի կողմից կատարված ստուգումները և տարեկան ծրագրով կատարված նույն կամ նույնատիպ ստուգումների միջին տևողությունները:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Բացասական,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության չափորոշիչը գնահատվում է բացասական, եթե ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գերազանցում է Տեսչական մարմնի կողմից իրականացված ծրագրային ստուգումների միջին տևողության 60%-ը:

2018 թվականի 3-րդ եռամսյակում ըստ անհրաժեշտության ստուգման միջին տևողությունը կազմել է 3.1 օր (իրականացվել է 18 ստուգում ծախսվել է 57 աշխ.օր), իսկ իրականացված ծրագրային ստուգումների միջին տևողությունը կազմել է 3.3 օր (իրականացվել է 58 ստուգում ծախսվել է 192 աշխ.օր): Այդպիսով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գերազանցել է Տեսչական մարմնի կողմից իրականացված ծրագրային ստուգումների միջին տևողության 60 %-ը և կազմել է 93.3 %:

Առաջարկություն: Տեսչական մարմնին անհրաժեշտ է կրճատել ըստ անհրաժեշտության իրականացվող ստուգումներին հատկացվող ժամանակը:

2.2) **Բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:**

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Բացասական,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության չափորոշիչը գնահատվում է բացասական, եթե հաշվետու ժամանակահատվածում բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը կազմում է ընդհանուր ստուգումների քանակի մինչև 40%-ը:

2018 թվականի 3-րդ եռամսյակում իրականացված 76 ստուգումից բարձր ռիսկային ստուգման օբյեկտ հանդիսացել է միայն 1 տնտեսվարող:

Վերլուծություն: Չափորոշի գնահատումը իրականացվում է «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի համաձայն - «բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտները կազմում

են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առնվազն յոթանասուն տոկոսը»: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեսչական մարմինը իր ստուգումները սկսել է իրականացնել 2017 թվականի 3-րդ եռամսյակից և նույն ժամանակից իրականացնում է տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության հաշվարկման գործընթացը, ինչի պատճառով չունի բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների բավարար տեղեկատվական բազա, իր տարեկան ծրագիրը կազմելուց հնարավորություն չի ունեցել ապահովել «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի պահանջները:

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը:

Գնահատման համար հաշվարկվել է հաշվետու ժամանակահատվածում ստուգումների տարեկան ծրագրով ընդգրկված ստուգումների միջին տևողությունը, ինչը համեմատվել է տարեկան կտրվածքով ծրագրով ընդգրկված ստուգումների միջին տևողության հետ:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- Դրական,

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության չափորոշիչը գնահատվում է դրական, եթե հաշվետու ժամանակահատվածում ստուգումների միջին տևողությունը տարեկան կտրվածքով ստուգումների միջին տևողությունից 10%-ից քիչ է:

Ստուգումների միջին տևողությունը տարեկան կտրվածքով կազմում է 7.2 օր, իսկ Տեսչական մարմնի 2018 թվականի 3-րդ եռամսյակում ստուգումների միջին տևողությունը կազմել է 3.1 օր:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- Չեզոք,

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է չեզոք, եթե հաշվետու ժամանակահատվածում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) կազմել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի 20-ից - 50%-ը:

2018 թվականի 3-րդ եռամսյակում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 18, իսկ տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակը կազմել է 59: Այդպիսով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների 30%-ը:

2.5) **Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տրամադրված տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից:**

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Դրական,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է դրական, եթե հաշվետու ժամանակահատվածում դժգոհություններ և բողոքներ չեն ստացվել:

2018 թվականի 3-րդ եռամսյակում ստուգման ենթարկված օբյեկտների կողմից դժգոհություններ և բողոքներ չեն ստացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

Արդյունքի չափորոշիչներն են՝

3.1) **Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը:**

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Չեզոք,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է չեզոք, եթե հաշվետու ժամանակահատվածում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակը կազմել է ստուգումների ընդհանուր քանակի 20%-ից - 30%-ը:

2018թ. 3-րդ եռամսյակում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 18, իսկ ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 76: Այդպիսով ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների 23,6%-ը:

3.2) **Տեսչական մարմնի վերահսկման 4 բարձր ռիսկային ոլորտներում իրավիճակի փոփոխությունը:**

Գնահատման համար վերլուծվել են հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից 4 բարձր ռիսկային ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքները, որոնք համեմատվել են նախորդ եռամսյակի ցուցանիշի հետ:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- **Չեզոք,**

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է չեզոք, եթե հաշվետու ժամանակահատվածում, նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ, իրավիճակի գնահատականի ցուցանիշը ունեցել է տատանում ոչ ավելի, քան 8%:

2018 թվականի 3-րդ եռամսյակում ցուցանիշը կազմել է 65 միավոր, իսկ նախորդ եռամսյակի ցուցանիշը եղել է 70 միավոր: Այդպիսով արձանագրվել է ցուցանիշի նվազում 7,2%-ով:

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

Գնահատման համար հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները, որոնք համեմատվում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- Բացասական,

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է բացասական, եթե հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ցուցանիշներից որևէ մեկը ավելացել է առնվազն 10%,

2018 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 15 105 դրամ և մարդկային ռեսուրսները 2,2: 2017 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից առանձին ստուգման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ – 8747 դրամ և մարդկային ռեսուրսներ – 2.05: Այդպիսով ֆինանսական միջոցների ծախսը 2018 թվականին ավելացել է 10%-ից ավելի:

Վերլուծություն. Չափորոշի գնահատականի բացասական լինելը պայմանավորված է 3-րդ եռամսյակում իրականացված 17 ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումներով, որոնց կատարման համար անհրաժեշտ են եղել գործուղումներ և հավելյալ 712 400 դրամ ֆինանսական ծախս:

3.4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

Չափորոշի գնահատականը 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար՝

- Դրական,

համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ չափորոշիչը գնահատվում է դրական, եթե հաշվետու ժամանակահատվածում դիմում-բողոքներ չեն ստացվել:

2018 թվականի 3-րդ եռամսյակում Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքներ չեն ստացվել: